

Կիպրահայ

Կիպրոսի Թուրքերը Հայկական Վանքը Թրքագիտութեան Հիմնարկի Պիտի Վերածեն

Թուրքիոյ կողմէ բռնազաւթուած Կիպրոսի թրքական հատուածին մէջ, ամերիկեան գումարներով վերանորոգուած հայկական վանական համալիրը, որ կ'ընդգրկէ՝ 8-րդ դարուն



կառուցուած հայկական Ս. Աստուածածին եկեղեցին, Առաջնորդարանը, հայկական Մելիքեան եւ Ուզունեան վարժարանները եւ լայնատարած շրջափակն ու Նահատակաց Յուշակոթողը՝ տեղի իշխանութիւնները կ'ուզեն թրքագիտութեան ինստիտուտ-հիմնարկի վերածել: Այս մասին կը հաղորդէ news.am-ը՝ վկայակոչելով թրքական Milliyet-ը:

Կիպրոսի մէջ ԱՄՆ դեսպանատունը խստօրէն արձագանգած է Կիպրոսի թրքական հատուածի իշխանութիւններու այս որոշումին, քանի որ ըստ

պայմանաւորուածութեան՝ ԱՄՆ գումար յատկացուցած է հայկական վանական համալիրի վերանորոգման համար, որպէսզի ան ծառայէ իբրեւ մշակութային կեդրոն: ԱՄՆ դեսպանատունը յայտարարած է, եթէ վանական համալիրը ըստ պայմանաւորուածութեան չօգտագործուի, ԱՄՆ-ն պիտի դադրեցնէ Կիպրոսի թրքական հատուածին տրամադրուող ֆինանսական աջակցութիւնը:

Հայկական վանական համալիրը թրքագիտական ինստիտուտ-հիմնարկ դարձնելու մասին տեղեկութիւնը խիստ անհանգստացուցած է նաեւ Կիպրոսի հայկական համայնքը: Երբ Կիպրոսի թրքական հատուածին ղեկավար Տերվիշ Էրօղլու Նիւ Եորքի մէջ կը մասնակցէր ՄԱԿ-ի համաժողովին, անոր առջեւ հայկական վանական համալիրի խնդիրը դրած են իբրեւ հրատապ լուծում պահանջող հարց:

Կղզի վերադառնալէն ետք Տերվիշ Էրօղլու իշխանութիւններուն յանձնարարած է լուծել այդ խնդիրը: Իր հերթին, Կիպրոսի թրքական հատուածին մէջ ԱՄՆ ներկայացուցիչ Ճոն Քեռնիկ հանդիպած է Կիպրոսի թրքական հատուածի վարչապետ Իրսէն Քիւչուքի հետ եւ շեշտած, որ սխալ է վանական համալիրը վերածել թրքագիտութեան հիմնարկի:

Կիպրոսի թրքական հատուածի մէկ այլ պաշտօնեայ եւս տարակուսած է հայկական եկեղեցին թրքագիտական ինստիտուտ-հիմնարկի վերածելու նախաձեռնութենէն՝ շեշտելով, որ Թուրքիոյ մէջ հայկական անշարժ գոյքը եւ եկեղեցիները ետ կու տան հայկական համայնքին, իսկ այդ ո՞ր տրամաբանութեամբ է Կիպրոսի մէջ հայկական համալիրին մէջ կը ստեղծուի թրքագիտական հիմնարկ:



Կիպրահայ Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, Նոյ. 5-ին, իր խոր ընդվզումը յայտնելով, ըսած է Cyprus Mail թերթին. «Ամբողջ վանական համալիրին վերանորոգման ծրագիրը կը միտեր ունենալու բազմահամայնքային տարածք մը, ուր համայնքներ կարենային քով-քովի գալ: Իսկ եկեղեցւոյ բարենորոգումը կատարուեցաւ, որպէսզի անիկա ծառայէ որպէս պաշտամունքի վայր՝ հայ համայնքին համար»: Ան նաեւ բարձր գնահատած է կատարուած բարենորոգչական աշխատանքները:

Կիպրահայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱԻԱՔ

Սուրիոյ աղէտեալ հայազաղութին առ ի զօրակցութիւն, զանազան ձեռնարկներ տեղի կ'ունենան ամենուր, Հայաստանի մէջ, թէ՛ սփիւռքահայ գաղթօճախներու, որոնց նպատակն է նիւթաբարոյական աջակցութիւն ցուցաբերել պատմական այս Մայր գաղութին, որ տասնամեակներ շարունակ հայ հոգեմտաւոր սնունդի եւ հայ ոգիի մատակարարն է եղած համայն սփիւռքին համար ալ, հասնելով մինչեւ Մայր հայրենիք...: Յեղասպանութեան եւ բռնի հայրենահանումի գեհնէն անցած տարագիր արեւմտահայութեան համար, Սուրիական հողը եղած է առաջին գաղթակայանը: Աւելին, Սուրիոյ անապատներուն, ի մասնաւորի Տէր Զօրի մէջ են թաղուած մեր բիրաւոր նահատակներու աճիւնները...այնտեղ է կառուցուած Նահատակաց Յուշարձան-եկեղեցին: Սուրիան պատմական խօսուն վկան է Հայոց Յեղասպանութեան...: Վիրաւոր այս գաղութին օգնութեան ձեռք երկարելը այսօր դարձեր է իրաւամբ համահայկական խնդիր, որմէ անմասն չէ, անտարակոյս, կիպրահայ փոքր գաղութը:



նահատակներու աճիւնները...այնտեղ է կառուցուած Նահատակաց Յուշարձան-եկեղեցին: Սուրիան պատմական խօսուն վկան է Հայոց Յեղասպանութեան...: Վիրաւոր այս գաղութին օգնութեան ձեռք երկարելը այսօր դարձեր է իրաւամբ համահայկական խնդիր, որմէ անմասն չէ, անտարակոյս, կիպրահայ փոքր գաղութը:





Շաբաթ 10 Նոյեմբեր 2012-ին, կ. ե. ժամը 4:00-ին, Նիկոսիոյ Առաջնորդարանի «Վահրամ Իւրիճեան» սրահին մէջ կայացաւ ընտանեկան հաւաք մը, ի նպաստ Բերիոյ Հայոց Թեմին, կազմակերպութեամբ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբին եւ ներկայութեամբ ստուար թիւով ներկաներու: Ներկայ եղան ի մասնաւորի Թեմիս Կաթ. Փոխ. Գերապատի Տէր Վարուժան Արք. Հերկելեան, Արժանապատի Տէր Մովսիկ քիւյ. Հապէշեան, Թեմական Մարմնի Ատենապետ Տէր եւ Տիկ.

Սեպուհ Դաւիթեան, Տիկ. Մակի Մահտեսեան, ինչպէս նաեւ Նարեկ վարժարաններու Հոգաբարձութեան եւ Վարչական Մարմնի անդամներ, ազգային այլ կառոյցներու ներկայացուցիչներ:

Վարչական ժողովի ներկայացուցիչ Տիկ. Անահիտ Էսկիճեանի բարեգալուստի եւ շնորհակալութեան խօսքէն ետք, Պրն Արտեմ Մուժիկեան ընդհանուր տեղեկութիւններ փոխանցեց Սուրիահայ պատմական գաղութին մասին: Պաստառին վրայ ցուցադրուեցաւ ապա Բերիոյ Թեմի եկեղեցիներն ու ազգային կառոյցները, իրենց անցեալ եւ ներկայ վիճակով:



Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին Եւա Յարութիւնեան, որ ասմունքեց Միսաք Մեծարենցի «Ուրախութիւնն Անանձնական» տպաւորիչ բանաստեղծութիւնը, Յասմիկ Սարգիսեան եւ Լիւսի Յովհաննիսեան, որոնք ջութակի վրայ գեղեցկօրէն նուագեցին Արամ Խաչատրեանի «Գայիանէ» Պալերէն հատուած մը, դաշնամուրի նուագակցութեամբ Նարա Սարգսբեանի: Կատարուեցան նաեւ այլ ասմունքներ եւ զուգերգներ, որոնք հայաշունչ, ջերմ մթնոլորտ մը ստեղծեցին սրահէն ներս: Տեղի ունեցան նաեւ վիճակահանութիւն եւ այլ խաղեր:

Պէտք է յատկապէս նշել, որ թէյասեղանի համադրամ ուտեստները սիրայօժար կերպով պատրաստեր էին Տիկնանց Յանձնախումբի անդամները եւ անոնց օժանդակ այլ տիկիներ:



Թէյասեղանի արարտին, Վարուժան Արքեպիսկոպոս կարեւորութեամբ շեշտեց Մուրիոյ մեր եղբայրներուն ու քոյրերուն օգնութեան փութալու անհրաժեշտութիւնը,



արտագին մաղթելով որ աղետեալ հայագաղութը շուտով վերագտնէ իր երբեմնի խաղաղ ու հայաշէն կեանքը:

Գնահատելի ձեռնարկ մը՝ արդարեւ, որուն յաջողութեան համար շնորհատրելի են Ս. Աստուածածին եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբի ժրջան անդամները, յայտագրին մասնակիցները եւ բոլոր ներկաները: ՎԱՐՁՔԵՐՆԻՆ ԿԱՏԱՐ՝:

Թղթակից

Խմբագրական

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԲԵՍԱԴՐՈՒԹԻՒՆ, ԹԷ՞...

Հայաստանի Հանրապետութեան քաղաքական դաշտը ամբողջովին ներգրաւուած է գալիք Փետրուարին կայանալիք նախագահական ընտրութիւններու «նախապատրաստական աշխատանքներով»: Ինչպէս Խորհրդարանական ընտրութիւններուն պարագային, ՀՀ իշխանութիւնները՝ գլխաւորութեամբ Նախագահ Սերժ Սարգսեանի, ամէն ինչ կ'ընեն, որպէսզի կացութիւնը դառնայ լռի կանխատեսելի եւ անշուշտ կառախարելի, առանց տեղ ձգելու անակնկալ յայտնութեանց..., որպէսզի անխափան վերընտրուի «ազգի ընտրեալը»՝

Սերժ Սարգսեան:



Նախապատրաստական այս աշխատանքներու ծիրէն ներս էր, որ կատարուեցաւ, անտարակոյս, նախկին արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի դէմ սարքուած գործարքը, որով ան ոչ միայն կը զրկուէր պատգամաւորական իր անձեռնմխելիութենէն, այլ նաեւ կ'ամբաստանուէր իր գլխաւորած «Միվիլիթաս» բարեգործական հաստատութեան հաշւոյն գումարներ իւրացնելու գործով: Սակայն, տակաւին, համոզիչ տուեալներով չբացայայտուեցան երբեք Օսկանեանի «օրինախախտումները», ինչ որ մտածել կու տայ որ կատարուածը քաղաքական պատուէր էր, որ յայտնապէս կը միտէր

քաղաքականապէս նսեմացնելու եւ վարկաբեկելու նախկին արտգործնախարարը, որ կրնայ նախագահական թեկնածու ներկայանալ մօտալուտ ընտրութիւններուն:

Այլ վարկած մըն ալ կը յուշէ, որ Վարդան Օսկանեանի վերջերս անդամակցած Բարգաւաճ Հայաստանի ղեկավար Գագիկ Ծառուկեանին դաս տալու փորձ էր սա նաեւ, քանզի ան եւս նախագահական թեկնածու կրնայ ներկայանալ: Դեռ չիօսինք նախկին նախագահ Ռուպերթ Քոչարեանի մասին, որուն հետ սերտօրէն գործակցած է ատենին Վարդան Օսկանեան, որպէս արտաքին գործոց նախարար եւ որ կրնայ հանդէս գալ նոյնպէս որպէս նախագահական թեկնածու իր հերթին...: Հետեւաբար, երեք թռչունը մէկ քարով զարնելու լուազոյն եղանակը պիտի չըլլա՞ր՝ «գործ սարքել» Օսկանեանի գլխուն եւ չէզոքացնել երեք հաւանական թեկնածուներուն նախագահական պալատ հասնելու կարելիութիւնը...:

Այսպէս, Հայաստանի Հանրապետութեան քաղաքական ներքին դաշտին մէջ, կը բեմականացուի բեմադրութիւն մը, որ տեսանելի կը դառնայ անզէն աչքով իսկ, իսկ



բեմադրիչները «Հանրապետական» կուսակցութեան պատգամաւորներն են, գործակցութեամբ իրենց հաւատարիմ «Օրինաց Երկրի» պատգամաւորներուն, բոլորն ալ՝ հաւատարիմ կամակատարները գործող Նախագահին, որ վճռած է ամէն գնով վերարտադրել ինքզինք նախագահական պաշտօնին վրայ...:

Հարկ կը զգանք այստեղ յստակօրէն աւելցնելու, որ մենք ոչ մէկ ձեռով կը միտինք դատապաշտպանը հանդիսանալու Վարդան Օսկանեանին, կամ նեցակցելու մանաւանդ Ռոպերթ Քոչարեանի նախագահական թեկնածութեան: Կ'արժէ յիշատակել այս առիթով, որ Ռոպերթ Քոչարեանի նախագահութեան օրով էր, որ մեր երկրէն ներս կատարուեցան զարհուրելի բռնութիւններ ու ահաբեկումներ, որոնք մնացին ցարդ անբացայայտ: Օրինակները շատ են: Ո՞վ կրնայ մոռնալ Մարտ մէկի սպանողը, Պօղոս Պօղոսեանի սպաննութիւնը՝ «Առագաստ» ճաշարանին մէջ, Քոչարեանի թիկնապահի ձեռամբ..., Ապրիլ 12-ի կրակահերթը ցուցարարներուն վրայ...էւ այսպէս շարունակաբար...: Իսկ հարկ կա՞յ նշելու որ այդ օրերուն, Քոչարեանի սերտ գործակիցն էր Վարդան Օսկանեան, որպէս արտաքին գործոց նախարար, որ մասնակից չըլլալով հանդերձ քոչարեանական արհնոտ բռնարարներուն, դարձաւ՝ իր պաշտօնին իսկ բերումով, լուռ վկան կատարուածներուն:

Իսկ քաղաքացիական հասարակութի՞ւնը: Ուշագրաւ է, որ հասարակութեան լայն զանգուածներուն մօտ, կը թուի թէ՛ դեռեւս կը տիրէ այն քաղաքական կարծրատիպը կամ կրաւորական համակերպողականութիւնը, որ կարելի չէ ձերբագատուիլ տիրող օլիկարխիկ իշխանութենէն...: Սա յառաջ եկաւ մանաւանդ այն ատեն, երբ բուն ընդդիմարիի ոյժը, որ Հայ Ազգային Քնկերէն էր, երկխօսութեան գնաց իշխանութեանց հետ եւ այսպիսով նահանջեց իր դիրքերէն, փլուզուելով միաժամանակ որպէս իրա՛ւ ընդդիմադիր քաղաքական ոյժ: Այս ալ գործող իշխանութեանց ճարպիկ մեքենայութիւններէն մէկը կարելի է համարել...: Այսինքն՝ չէզոքացնել այն անողոք ընդդիմադիր ոյժը, որ տեսականօրէն գէթ, եւ ոչ միայն, ունէր հնարաւորութիւնը գալու իշխանութեան: Հասարակութեան այս լճացումը դրսեւորուեցաւ ի մասնաւորի խորհրդարանական ընտրութեանց ժամանակ, երբ մեծամասնութիւնը գոհացաւ միայն իր բաժին կաշառք-ողորմութիւնը ստանալով քաղաքական իշխող ոյժերէն, որեւէ յոյս չունենալով որ ոյժերու նոր ու արմատական դասաւորում մը կրնար յառաջանալ խորհրդարանական ընտրութիւններուն որպէս արդիւնք:

Ներկայիս, սակայն, կարեւորութեամբ պետք է ընդգծել, որ քաղաքացիական գիտակցութեան եւ պատասխանատուութեան արթնացման եւ զարթօնքի նշաններ ցոյց կու տայ հասարակութեան մէկ նկատառելի մասը, շնորհիւ կարգ մը հասարակական շարժումներուն, ինչպէս՝ բնապահպաններու շարժումը, «Մարդարապատ» շարժումը, «Վահէ Աւետեան» հասարակական նախաձեռնութիւնը, եւ՝ անոնց շուրջ համախմբուած մտաւորականներուն, արուեստագէտներուն եւ շարքային քաղաքացիներուն ու երիտասարդներուն..., որոնք կը ցուցաբերեն քաղաքացիական կամքն ու յանձնառութիւնը՝ դուրս բերելու երկիրը այս ճգնաժամային իրավիճակէն եւ ստեղծելու պետական-հասարակական նոր համակարգ:

Նշեալ քաղաքացիական «ակտիւիստ»ներէն 29-հոգինոց խումբ մը՝ վճռական եւ երկրին համար ապագայակերտ քայլի ձեռնարկեց վերջերս, երբ Նոյեմբեր 15-ին՝ հանդէս եկաւ յայտարարութեամբ, ուր կը հրապարակուէր, որ կը նախաձեռնեն քաղաքական գործընթաց մը, որ նպատակ ունի՝ «ազգային նպատակներու եւ խնդիրներու առաջադրման ու իրականացման ունակ կառավարութեան համակարգ ունեցող պետութեան հիմնադրումը»:



Այդ ուղղութեամբ ալ, անոնք հռչակեցին ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՐԱՆ, կոչ ընելով ՀՀ քաղաքացիներուն եւ արտերկրի հայութեան՝ տէր կանգնելու իրենց մարդկային, ազգային եւ պետական արժանապատուութեան, ազատութեան եւ արդարութեան եւ մասնակցելու՝ Հայաստանի Ինքնիշխանութիւնը՝ Հայաստանի բոլոր քաղաքացիներուն եւ հայ ժողովուրդի շահերուն ծառայեցնելու գործին, եւ զօրավիճ ըլլալու նշուած քաղաքական գործընթացին:

Սա ամբողջովին նոր իրադրութիւն մը կրնայ ստեղծել Հայաստանի Հանրապետութենէն ներս, յոյս ներշնչելով որ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԴ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ կրնայ ի վերջոյ նուաճել հասարակութեան լայն զանգուածներու վստահութիւնն ու ներգրաւուածութիւնը եւ տակաւ յանգիլ ազգային-պետական-հասարակական նոր համակարգի մը ձեւաւորման, ինչ որ «օդի, ջուրի, հացի նման» կենսական ու վճռորոշ է մեր երկիրը դուրս բերելու՝ բարոյա-հոգեբանական, ընկերային-տնտեսական, ժողովրդագրական եւ կառավարման համակարգի ճգնաժամէն եւ ապահովելու զարգացման ու բարգաւաճման նոր հեռանակար:

Ներկայիս, հայրենի քաղաքացիական հասարակութիւնը կը գտնուի վճռական մարտահրաւերի մը դէմ յանդիման: Պիտի ընդունի՞ ան՝ իր կրաւորական պահուածքով եւ իր խիղճը երեսուն արծաթով ծախելու յօժարակամութեամբ, ա՛յն դերակատարութիւնը, որ իրեն կը հրամցուի ՀՀ իշխանութեանց բեմականացումով, ինչ որ պիտի ապահովէ նոյն դրամ-իշխանութիւն համակարգի շարունակութիւնը, թէ՞՞ քաղաքացիական գիտակցութեան նոր արթնացումով ու նոր զարթօնքով, քաղաքացիական պատասխանատուութեամբ եւ քաջութեամբ ալ տոգորուած, պիտի ամէն ճիգ ի գործ դնէ, վերջապէս, նոր ուղղութիւն մը տալու իր պետական-հասարակական կեանքին եւ ՍՏԱՆՁՆԷ իր երկրի, ներկայ եւ գալիք սերունդներու ճակատագրին

ԻՐԱԻԱՏԻՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆԸ:

ԶՄՈՌՆԱՆՔ ՈՐ, ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԸ ՄԻՇՏ ԱԼ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ:

Հարցազրոյց

Հրաշքներ չեն լինում, բայց նա կ'անէր առաւելագոյնը՝

Հարցազրոյց ՀՀ ազգային հերոս, ԱԺ նախկին նախագահ Կարէն Դեմիրճեանի տիկնոջ՝ Ռիմա Դեմիրճեանի հետ:



-Ռուք աւարտեցիք աշխատանքը ձեր կեանքի թերեւս ամենակարեւոր գրքի վրայ. Կարէն Դեմիրճեանի մասին Յիշատակ՝ գիրքն արդէն տպագրուել է:

-Այո, եւ դրանով մասամբ կատարեցի իմ պարտքը Կարէնի յիշատակի առջեւ: Ես հասցրի աւարտել գիրքը, դա շատ կարեւոր էր, որովհետեւ այն, ինչ ես գիտեմ, եւ կ'ասեմ: Այնպէս, ինչպէս ես եմ ճանաչել Կարէնին, ոչ որ

չի կարող դա լրացնել: Սակայն գիրքը գրելու ընթացքում շատ դժուարութիւններ կրեցի, հիմնականում բարոյական:



Մտածում էի՝ արդե՞՞ք բաւարար են ուժերս, իմ անփորձութեան իմաստով, որովհետեւ բացի մեթոտական աշխատանքներից եւ դասագրքից՝ այլ բան չեմ գրել, արդե՞՞ք կը պահպանեմ ճշմարտութիւնը, օպեկտիւութիւնը: Այդ բոլորը յաղթահարեցի: Սակայն մի հարց աւելի ինձ տանջեց, գրելու ընթացքում վերապրեցի ամբողջ անցեալը, տառապեցի, բայց կամայ, թէ ակամայ իմ առջեւ կանգնեց շատ կարեւոր մի հարց, արդե՞՞ք ճիշդ էր այդպէս ապրելը, որովհետեւ երբ նայում եմ ժամանակակից աշխարհին, որը շատ է փոխուել, մարդիկ են փոխուել, շէշտադրումները արժէքային համակարգում փոխուել են. արդե՞՞ք ճիշդ ապրեց, արդե՞՞ք չպէ՞ տք է մի քիչ էկոիստ լինէր, իր մասին, ընտանիքի մասին մտածէր:

Երկար չմտածեցի. շատ կարճ ժամանակում ինքս ինձ պատասխանեցի. այո, ճիշդ է ապրել: Կարէնի սկզբունքներից մէկն արտայայտուել է իր խօսքերում. Բարձրագոյն արժէքներն են պետութիւնն ու ժողովուրդը, եւ մենք մեր գործունէութեան մէջ պէտք է ելնենք նրանց շահերից... Կարո՞ղ էր արդե՞՞ք նա ուրիշ ձեւով ապրել, երեւի թէ ոչ...Նա այդպէս էր ծրագրաւորուած եւ նրա մտեցումն այսպէս, թէ այնպէս անդրադառնում էր ընտանիքի վրայ:

-Ի՞նչ իմաստով:

-Մենք շատ բաներից ենք զրկուել՝ ես, տղաներս, բայց ոչ մի բանի համար չենք զոջացել, ինչպէս ասում են՝ ամէն ինչի համար վճարել է պէտք: Եւ այն յարգանքը, այն յիշատակը, որ նա ունի ժողովրդի մօտ, եւ չեմ վախենում ասել, այն սէրը, որ նա վայելում է, պահանջեց այդպիսի վճարում, այդ գնահատականը իր ապրած կեանքի արդիւնքն է: Շատ քչերին է դա յաջողում պատմութեան մէջ ընդհանրապէս: Բայց ամենահանգստացնողն այն է, որ նա գնահատուեց, եւ չնայած իր ողբերգական վախճանին, եւ գտնում եմ, որ երկրորդ անգամ Կարէնի ասպարէզ դուրս գալը, ունեցաւ նաեւ անձնական շատ մեծ նշանակութիւն: Նա տեսաւ, որ տարիների ընթացքում ժողովրդի վերաբերմունքն իր հանդէպ չի փոխուել. հասարակութիւնը նոյն կերպ է իրեն վերաբերում: Յետադարձ հայեացք ձգելով՝ գտնում եմ, որ կեանքիս խնդիրը կատարել եմ, սխալներ չեմ գործել.նա կարող էր այդպէս վստահ գրել՝ տեսնելով համաժողովրդական սէրը:

-Տիկին Դեմիրճեան, տասներեք տարի է անցել այն չարաբաստիկ օրից: Ցաւը որոշ չափով մեղմունե՞լ է:

- Չնայած 13 տարի է անցել, բայց ոչ հեռաւորութիւնը, ոչ տարածութիւնը, ոչ նույնիսկ կեանքի ընթացքը, կենցաղային հոգսերը մոռացութեան չեն տալիս ոչինչ. երբեմն թում է, թէ ցաւը մեղմուել է, բայց մի փոքր մտքի շարժում, յուշ՝ ամէն ինչ վերականգնում է ամենայն մանրամասնութեամբ:

Յիշում եմ այդ օրը. ամէն ինչ այնպէս չէր, ինչպէս միշտ. նախաճաշի ժամանակ նրա կողքին չէի նստած, չճանապարհեցի,ինչպէս միշտ էի անում: Ես նրան ձայն չտուեցի, երբ արդէն բնակարանից դուրս էր եկել, որ մէկ էլ տեսնեմ, ամէն ինչ այնպէս չէր այդ օրը: Նախաճաշը պատրաստեցի եւ գնացի ինձնով զբաղուելու, որովհետեւ դասախօսութեան էի շտապում: Դա իմ վերջին դասախօսութիւնն էր, ի դէպ, դրանից յետոյ ինձ չկարողացան համոզել շարունակել աշխատանքս, որովհետեւ իմ յիշողութեան մէջ մնաց այդ վերջին դասախօսութիւնը, երբ ընդամենը ժամեր էին բաժանում ինձ այդ ողբերգութիւնից, իսկ ես ոչինչ չգիտէի:



Բայց ինձ համար ամենացաւալի իրողութիւնն այն է, որ մենք այդպէս էլ չկարողացանք խօսել. մենք միշտ կիսուում էինք, խօսուում էինք, միմեանց մտահոգիչ խնդիրներից տեղեկանում էինք, այս անգամ էլ էր այդպէս, ես հասկանում էի նրա լրիւ մտահոգութիւնը, չնայած նա հմտօրէն թաքցնում էր, բայց երկուսս իրար խնայում էինք, բարձրաձայն չէինք խօսում խնդիրների մասին: Ինչպէ՞ս խօսէինք, նա խնայում էր ինձ աւելորդ հոգեբանական բեռից:

Նա շատ տղամարդավարի պահեց իրեն, նա թոյլ չտուեց մեզ մտահոգուել, ցոյց չտուեց, որ սպասում է դրան՝ ոչ այդքան շուտ, բայց սպասում էր: Երբեմն հարց են տալիս՝ նա գիտէ՞ր: Նա չգիտէր, բայց հասկանում էր, թէ ինչ բանի մէջ է մտել, որ շատերին եւ ոչ միայն ՀՀ-ում, յատկապէս դրսում, դուր չէր գալ նրա երեւան գալը, նրան չճանաչողներն էլ գիտէին, որ նա իր սկզբունքներին դէմ չէր գնայ, եթէ նա եկաւ, ուրեմն պէտք է իր ձեռով աշխատէր, իսկ ազդեցութիւնն էլ այնպիսին էր, որ արդէն վտանգ էր ներկայացնում: Այդ բոլորը նա գիտակցում էր, ես էլ էի գիտակցում ենթագիտակցաբար: 1998 թուականին, երբ ամէն ինչ աւարտուեց, ես ընկերուհուս ասացի. 'Վայ, ինչ լաւ է, որ չանցաւ, եթէ անցնէր՝ կ'սպանէին: Այդպէս էլ ստացուեց, ուղղակի մէկ տարի նրա կեանքը երկարեց:

-Ի՞նչն էր Կարէն Դեմիրճեանի մտահոգութեան առարկան, որ անգամ սպանուելու կանխագագցում էր առաջացրել:

-Նա հասկանում էր, որ դժուար գործի մէջ է մտել, որ կան ուժեր ներսում եւ դրսում, որոնց բոլորովին պէտք չէր նրա վերադարձը, որ նա օտար մարմին էր: Գիտէք, ժամանակակից աշխարհը սոցիալիզմ բառից խուսափում է, սարսափում է, իսկ նա երկիրը պէտք է տանէր միայն ու միայն սոցիալիստական ուղիով՝ ոչ առաջուայ, նորագոյն պայմաններում, նոր մօտեցումներով: Նա բարեփոխումների ծրագիր ուներ, նա բարեփոխումների վարպետ էր, Կորպաչով չէր, քանդոդ չէր:

Միւս մտահոգութեան առարկան Մեղրիի հարցն էր: Նա դէմ էր Հայաստանին առաջարկուող այդ կործանարար ծրագրին: Շատ էր մտահոգուած, դա նշանակում էր Հայաստանը դարձնել անկլաւ, նա երբ պատմեց մեզ՝ ինձ ու Ստեփանին, ասաց՝ ոչ մէկին մի ասէք, բայց դուք իմացէք: Ես այն ժամանակ դրա իմաստը չհասկացայ, յետոյ հասկացայ: Նա եղբորը, ընկերներին ասել էր՝ 'սպանելու են', հաշուարկել էր, որ միակ ձեւը իրենից ազատուելու դա էր: Ես էլ զգում էի, անգամ այդ օրն եմ իմ եղբոր կնոջն ասել. 'Ես չգիտեմ, Կարէնն այնպիսի գործի մէջ է մտել, որ ամէն օր տագնապով սպասում եմ՝ երեկոյեան արդեօք կը տեսնե՞մ նրան, թէ՞ ոչ, ինտուիտիւ եմ զգացել: Ոչ ես, ոչ ինքը չէինք պատկերացնում, որ այդքան շուտ եւ այդ ձեռով կ'ազատուեն Կարէնից, ինձ թուում էր, որ նրան պէտք է աշխատեն փոխել, համոզել ինչ-որ հարցերում, յետոյ հասկացայ, որ ճիշդ են կռահել, նա խաբուողը չէր:

-Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն կը լինէր Հայաստանը, եթէ այսօր Կարէն Դեմիրճեանը ողջ լինէր:

-Ես ուզում եմ անկեղծ լինել. հրաշքներ չեն լինում, փրկիչներ չեն լինում, բայց նա կ'անէր առաւելագոյնը, որպէսզի Հայաստանին ետ պահէր սխալ քայլերից: Մենք այնպիսի ճակատագրական պահեր ենք ապրում, ՀՀ-ն այսպիսի ծանր վիճակում երբեք չի եղել, որովհետեւ 70 տարի պաշտպանուած է եղել, մենք մոռացել էինք այն ծանր տարիները, երբ մենակ էինք, եւ մեզ յօշոտում էին: Այս իրականութեան մէջ շատ դժուար է, բայց Կարէնը շատ խելացի էր, մեծ դիւանագետ, շատ լաւ գիտէր ժամանակակից տնտեսութիւնը, գերակայութիւնները՝ թէ քաղաքական, թէ տնտեսական, կոմպրոմիսների եւ կոնսենսուսի վարպետ էր, դրա համար կ'անէր առաւելագոյնը, որպէսզի մեղմէր այս վիճակը: Եթէ ես



ցաւում եմ, ապա սկզբից որպէս իմ հարազատի, իմ երեխաների հօր, իմ ամուսնու, բայց ոչ պակաս ցաւում եմ Հայաստանի համար. այդ մեծ կորուստ էր, բայց ի՞նչ արած, նրա կեանքը, այնուամենայնիւ, զուր չանցաւ, ինչքան կարողացաւ՝ արեց:

-Ձեր կարծիքով, Կարէն Դեմիրճեանն ըստ արժանւոյն գնահատուե՞ց:

-Գիտէք, ամէն ինչ արժէ մարդկանց վերաբերմունքը իմ հանդէպ, ես մարդկանց աչքերում կարդում եմ եւ ցաւ, եւ կարեկցանք, եւ օգնելու պատրաստակամութիւն. մեծ ժառանգութիւն է թողել Կարէնը մեր ընտանիքին: Մի անգամ, հենց Հոկտեմբերին էր այդ տարուայ, ասացի՝ Կարէն ջան, Աստուած չանի, քեզ եթէ մի բան պատահի՝ ես նոյնիսկ քո աշխատակիցներին չեմ ճանաչել, ես ինչ պէտք է անեմ, ասաց. Մի վախեցիր, մի մտահոգուիր, ես քեզ այնպիսի անուն եմ թողնում, որ ձեզ ոչ՝ ասող չի լինի: Բհարկէ, հատուկէնտ ասողներ գտնուում են, բայց այն վերաբերմունքը, որ ես տեսնում եմ, ինձ համար աշխարհ արժէ, դա մեղմում է կորստի ցաւը, օգնում է ապրել:

Զրուցեց Դիանա Մարկոսեանը


Հարցազրոյց

Մեր ամենամեծ գանձը՝ մայրենի լեզուն

«Գարուն», 1985թ, թիւ 2«ԳԱՐՈՒՆԻՆ» պատասխանում է ակադէմիկոս Վիկտոր ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆԸ

— Ինչպե՞ս եք գնահատում լեզուի դերն ու նշանակութիւնը, նրա զարգացման ընթացքը ներկայ փուլում՝ հասարակական կեանքում և գիտութեան բնագաւառում:

— Լեզուն շատ մեծ նշանակութիւն ունի մեր կեանքում: Դա լաւ գիտակցում են բոլոր բնագաւառների, ինչպէս և գիտութեան աշխատողները: Մասնաւորապէս ճշգրիտ գիտութիւնների ներկայացուցիչների համար լեզուն ոչ միայն հաղորդակցութեան, այլև մտածելու, յայտնագործելու շատ կարելոր միջոց է: Որպէս այդպիսին, լեզուն հասարակութեան մէջ էլ բոլոր հաղորդակցութեան միջոցներից ամենակարելորն է: Ասում ենք ամենակարելորը, որովհետեւ առաջացել ու մշակուել է բնական ճանապարհով: Եթէ դա այդպէս է, ուրեմն պէտք է շատ մեծ ուշադրութիւն դարձնել լեզուի վրայ: Լեզուն պէտք է միշտ գործածուի լաւ, կատարեալ ձեւով, այսինքն՝ տեղին և նպատակաւայաց, հետեւաբար անհրաժեշտ է, որ նա շարունակ կատարելագործուի, զտուի և դառնայ հաղորդակցման, պայքարի սուր զէնք:



Չէ որ մենք ուզում ենք, որ մեր երկրի տարբեր մասերի միջեւ լինի սերտ և ամուր կապ, բացուեն նոր ուղիներ, և ահա մենք հարկադրուած ենք միշտ կատարելագործել մեր



հաղորդակցութեան միջոցները, առաջին հերթին լեզուն: Եւ բաւական չէ միայն ասել, որ պէտք է յատուկ ուշադրութիւն դարձնել լեզուի կատարելութեան վրայ: Անհրաժեշտ է հետեւողական և ջանասէր աշխատանք, և դա պէտք է կատարուի շատ խնամքով, մտածուած, որովհետեւ, ի տարբերութիւն միւս հաղորդակցութեան միջոցների, լեզուն զարգանալով իր բնական հունով, արդէն ունի իր զարգացում գտած, կատարելագործուած օրինաչափութիւնները: Հենց այստեղ է, որ մենք պէտք է շատ զգոյշ լինենք և խուսափենք լեզուի մէջ մուտք գործող արհեստական և չմտածուած լեզուական միջոցներից, դիպուկ ու յստակ հաղորդակցումը արատաւորող շինծու ձեւերից:

Ինչ վերաբերում է հայոց լեզուին, ապա պէտք է համոզուած և վստահօրէն ասել, որ հայոց լեզուն աշխարհի ամենահարուստ, զարգացած և կատարելագործուած լեզուներից մէկն է: Մենք գիտենք, որ, օրինակ, բնական գիտութիւնների բնագաւառում հայոց լեզուն որպէս լաւ մշակուած, ճոխ լեզու, յաջողութեամբ ծառայում է իր նպատակին, դառնալով կատարեալ հաղորդակցութեան միջոց նաև գիտութեան բնագաւառում: Հենց այս հանգամանքն է, որ մեզ աւելի մեծ չափով է պարտաւորեցնում, մեզանից՝ գիտութեան մշակներիցս, պահանջում է մշտապէս հետեւել նրա ընթացքին, ճիշտ զարգացմանը, խստօրէն հսկել նրա ճիշդ կիրառմանը ո՛չ միայն գիտութեան, այլև բոլոր բնագաւառներում:

Հետաքրքիր է, որ լեզուն ունի իր որոշակի տրամաբանութիւնը: Նա արտացոլում է մարդու մտածողութիւնը, այլ կերպ ասած՝ մտածելակերպը: Եթէ այսպէս է, ուրեմն, լեզուի կատարելագործման վիճակից շատ մեծ չափով կախուած է այն, թէ ինչպէս է մարդը մտածում և գործում: Ես պէտք է ասեմ, որ լեզուի, յատկապէս մայրենի լեզուի, ինչպէս և նրա առանձին դրսեւորումների՝ խօսքի, լաւ տիրապետումն ու կատարելագործումը էական նշանակութիւն ունեն սերունդների դաստիարակութեան, նրանց մտածողութեան զարգացման համար: Այնպէս որ, դա ունի նաև գործնական մեծ նշանակութիւն: Հենց այս տեսակէտից էլ մենք պէտք է միշտ հոգատար լինենք լեզուի ճիշդ զարգացման նկատմամբ և աւելի ու աւելի ձգտենք նրա կատարելագործմանը: Այժմ մեզանից պահանջում է, որ մենք իրար հետ խօսենք, գրենք, այսինքն հաղորդակցութեան մէջ մտնենք միայն ու միայն լաւ լեզուով: Իսկ ի՞նչ ենք հասկանում լաւ լեզու ասելով: Լաւ լեզու ես հասկանում եմ բնական, ժողովրդի ստեղծած և գրականութեան կողմից մշակուած լեզուով խօսելու և գրելու կարողութիւն: Մա վերաբերում է հայոց լեզուի դրսեւորման բոլոր բնագաւառներին, յատկապէս այժմ, երբ հայոց լեզուն մեր հանրապետութեան պետական լեզուն է: Մենք կը հասնենք ցանկացած արդիւնքի, եթէ լեզուի մշակոյթի գործնական հարցերը լուծենք միայն այդ սկզբունքով: Այս պատուաւոր գործում խիստ անհրաժեշտ է հետեւողական աշխատանք:

Ես ուզում եմ այստեղ նորից անդրադառնալ գիտութեան բնագաւառին, որովհետև լեզուի ճշգրտութեան, դիպուկութեան, խորութեան և այլ առանձնայատկութիւնները բացառիկ դեր են կատարում գիտական աշխարհում: Պէտք է նկատի ունենալ, անշուշտ, որ գիտութիւնը այսօր մարդկային գործունէութեան ամենաարագ աճող, փոփոխուող բնագաւառն է, որի հետ միաժամանակ շատ արագ փոփոխում է նաև գիտական լեզուն: Ես աւելի քան կէս դար աշխատում եմ գիտութեան բնագաւառում և նկատել եմ, որ այսօրուայ գիտութիւնը և այն գիտութիւնը, որ եղել է կէս դար առաջ, հսկայական չափերով իրարից տարբերում են: Շատ են տարբերում իրարից, ինչ որ այն ժամանակ էինք սովորում և այն, ինչ որ այսօր ենք սովորում: Այսօրուայ երիտասարդ գիտական աշխատողը շատ բանով է տարբերում անցեալի գիտաշխատողից: Նրա վրայ մեծ պարտականութիւն է դրուած: Նա այսօր ոչ միայն պէտք է լարուած հետեւի գիտական գաղափարների զարգացմանն ու տարածմանը, այլև



պարտաւոր է ապահովել համապատասխան լեզուական մակարդակ, այլ կերպ գիտական աշխատանքը ցանկացած արդիւնքը չի տայ: Ուրեմն գիտութիւնը կարելի է դիտել այս տեսակետից, որպէս լեզուի զարգացման հետ կապուած մարդկային գործունէութեան ամենակենսունակ ուղղութիւններից մէկը: Երբ խօսում ենք զարգացած գիտութեանը՝ համապատասխան լեզուական մակարդակի մասին, այդ նշանակում է, որ մենք գիտութեան մշակներս, պետք է ստեղծենք հայոց գիտական լեզուն և հասցնենք կատարելութեան: Հենց այդ գիտական լեզուն էլ մեծապէս նպաստելու է համաժողովրդական լեզուի զարգացմանը:

— Հայոց լեզուի դրսեւորման բնագաւառները շատ են, բոլորի մասին անկարելի է խօսել: Մեզ հետաքրքրում է Ձեր կարծիքը դպրոցի, այդ բնագաւառի լեզուի մասին:

— Լաւ ասացիք, վերցնենք թէկուզ հենց այդ բնագաւառը, ժողովրդական կրթութեան բնագաւառը, դպրոցը: Այստեղ անչափ կարեւոր է հայոց լեզուի ճիշդ կիրառման հարցը: Կիրառելով մայրենի լեզուն դպրոցներում ճիշդ, կատարելապէս սովորեցնելով խօսել, գրել և կարդալ ընտիր հայերէնով, դրանով մենք հետապնդում ենք երկու նպատակ: Առաջին նպատակն այն է, որ դրանով մենք օգնում ենք աճող սերնդին, զարգացնում նրա ճիշդ մտածողութիւնն ու տրամաբանութիւնը: Լեզուն ինքնին մտածողութիւն է: Մենք գիտենք, որ մարդը աշխատում է խօսել այնպէս, ինչպէս մտածում է, բայց չպետք է մոռանալ, որ մտածելու ժամանակ, մտածողութեան ընթացքում նա զգալի չափով օգտագործում է իր մայրենի լեզուն: Ուրեմն այստեղ՝ դպրոցում, մայրենի լեզուի լաւ ուսուցումը, լեզուի կատարելապէս տիրապետումը լայն ճանապարհ են բացում սովորողների առջև: Ես ուզում եմ իմ միտքը ձեւակերպել այսպէս: Կատարելապէս լեզուն ծնում է կատարելապէս մտածող, մարդու մտածելակերպը ձեւաւորում է լեզուի միջոցով: Լեզուական օրինաչափութիւններին լաւ տիրապետողը հեշտութեամբ է ձեռք բերում կոռ տրամաբանութիւն և ճկուն մտածողութիւն, որոնցով էլ պայմանաւորուած են նրա մտածելակերպն ու գործելակերպը:

Երկրորդ կարեւոր հանգամանքը, որ կապուած է այդ բնագաւառի՝ դպրոցի հետ, լեզուի կատարելագործումն ու պահպանումն է: Միաժամանակ ես ուզում եմ ասել, որ այն լեզուն, որից մենք օգտւում ենք, մի մեծ գանձ է: Կարծում եմ, որ մեր հին սերունդներից ստացած հոգեւոր գանձերից ամենամեծերից մէկն է, եթէ ոչ ամենամեծը: Մեր նախնիներից ժառանգելով այդ գանձը, մենք պարտաւոր ենք սրբութեամբ պահպանել, մշակել ու կատարելագործել այն, հարստացնել և դրանով աւելի հարստանալ: Այս գործում մեր դպրոցը շատ անելիք ունի: Միւս կողմից, եթէ դպրոցը անտարբեր լինի, պատշաճ մակարդակի վրայ չդնի մայրենի լեզուի դասաւանդման գործը, շռայլի այդ գանձը, ապա վնաս կը հասցնի մեր մշակոյթին: Դպրոցը պարտաւոր է ճիշդ օգտագործել լեզուն և միայն ամենժամեայ, ամենօրեայ հոգատարութիւնը կարող է լաւ օգտագործման, կատարելագործման ուղիներ գտնել:

— Շատերին է հետաքրքրում, թէ Դուք ինչպե՞ս եք սովորել մայրենի լեզուն, ովքե՞ր են եղել Ձեր սիրելի ուսուցիչները և այժմ ինչպե՞ս եք կատարելագործում ձեր իմացածը:

— Հայրս այն մարդկանցից էր, որ ուղղակի սիրահարուած էր իր լեզուին: Սա շատ մեծ ազդեցութիւն թողեց մեր ընտանիքի, մեզ վրայ, որպէսզի մենք էլ սիրենք մեր լեզուն: Հայրս միաժամանակ ինտերնացիոնալիստ էր, պահանջում էր, որ մենք սովորենք նաև այլ լեզուներ, բայց ամենից լաւ տիրապետենք մեր մայրենի լեզուին: Ես հայերէնը սովորել եմ իմ հօրից, նա է իմ մէջ առաջացրել սեր և հետաքրքրութիւն մեր լեզուի բարձր արժանիքների



նկատմամբ: Բացի դա, ես ունեցել եմ հայոց լեզուի շատ լաւ ուսուցիչ, որին միշտ յիշում եմ, իմ այդ սիրելի ուսուցիչն էր Հայկ Յովակիմեանը: Նա ինձ վրայ շատ մեծ տպավորութիւն է թողել, խօսում էր անաղարտ հայերէնով, նա, կարելի է ասել, լեզուի սիրահարներից էր, իր մայրենի լեզուն սիրող, պաշտողներից մէկը: Շատ լաւ բան է, երբ մարդ լեզուի սիրահար է կամ լեզուասէր, ինչպէս Դուք էք անուանել ձեր ակումբը: Ես էլ եմ շատ սիրում իմ մայրենի լեզուն, հետեւաբար ես էլ եմ լեզուասէր, ուրեմն ձեր ակումբի անդամը:

Կան մարդիկ, որոնք շատ լաւ հասկանում են, թէ ինչ նշանակութիւն ունի իրենց ժողովրդի համար մայրենի լեզուն: Նրանք հասկանում են նաև, որ մայրենի լեզուին լաւ տիրապետելը հիմք է նաև ուրիշ լեզուների ուսումնասիրութեան, լաւ սովորելու համար: Ես միշտ էլ սիրել եմ կարդալ հայ գրականութիւն: Դա մեծ դեր է խաղացել մայրենի լեզուի իմացութիւնս կատարելագործելու համար, երբ կարդում ես գեղարուեստական գրականութիւն, ապա անխուսափելիօրէն կատարելագործում ես իմացածդ մայրենի լեզուն: Այժմ էլ հիմնականում այդ ճանապարհով եմ հարստացնում իմ իմացած հայերէնը, կարդում եմ հայ գրականութիւն, իհարկէ, յատուկ ուշադրութիւն դարձնելով լեզուական կողմի վրայ:

Ինձ համար մայրենի լեզուն առաջին հերթին մեր ժողովրդի խօսելու, մտածելու լեզուն է: Ես այդ ժողովրդի զաւակն եմ, հետեւաբար չեմ կարող չսիրել, չփայփայել դարերի խորքից մեզ հասած այդ հոգեւոր գանձը: Բացի այդ, կայ մի ուրիշ բան էլ: Այսպէս, երբ ուզում ես մտերմական ձեռով արտայայտել քո մտքերն ու զգացմունքները, որոնք վերաբերում են քո անձնական կեանքին, ընտանեկան կեանքին, ապա այդ մտքերն ու զգացմունքներն արտայայտելիս հարկադրուած ես միշտ դիմել քո մայրենի լեզուի օգնութեանը: Ինչպէս չսիրեմ իմ մայրենի լեզուն, երբ կեանքիս դէպքերից խորապէս համոզուել եմ, որ մայրենի լեզուն աւելի շատ է կապուած զգացմունքների աշխարհի հետ: Մայրենի լեզուն հարազատ յոյզերի հարազատ աշխարհ է: Մարդու հոգեկան աշխարհը այնքան սերտօրէն է կապուած մայրենի լեզուի հետ, որ այդ լեզուով սովորածը, զգացածը մօր կաթի նման ներծծուում է նրա Էութեան մէջ:

— Աշխարհի անուանի մարդկանցից ոմանք, հայ թէ օտար, հայերէնը համարել են կատարելագործուած, հարուստ և ճկան լեզու: Դուք ի՞նչ կարծիքի էք, ինչպէ՞ս էք բացատրում լեզուի հարստութիւնը, ճկունութիւնը:

— Ընդհանրապէս լեզուն համարում ենք հարուստ, ճկուն այն դէպքում, երբ նրա միջոցով կարողանում ենք ազատօրէն արտայայտել ցանկացած գաղափարները, մտքերը, մանաւանդ ժամանակակից կեանքի, որը շատ հարուստ է գիտութեան և տեխնիկայի բազմազան երևոյթներով ու հասկացութիւններով: Մեր լեզուն հենց այդպիսին է: Հայոց լեզուի հարստութեան հիմնական պայմանը նաև այն է, որ կարողանում է լաւ արտայայտել մարդկային զգացմունքները, դրանց նրբութիւնները: Հենց հայերէն լեզուն ունի գաղափարներն ու զգացմունքները ճշդությամբ ու խորութեամբ արտայայտելու համապատասխան ու նուրբ ձեւեր, նոյնիսկ բազմաթիւ ձեւեր: Սա մեր լեզուի հարստութիւնն է: Այլ բան է լեզուի ճկունութիւնը: Դա այն է, թէ տուեալ լեզուն ինչպէս է յարմարում նոր պայմաններին: Մեր լեզուն ոչ միայն շատ ճկուն է, այլև խիստ տրամաբանական է: Օրինակ, մեր թուերի անուանումները, դրանք այնքան պարզ ու հեշտ են կազմուած, որ շատ աւելի մատչելի են, քան շատ ու շատ լեզուներում: Օրինակ, տասնմէկ, տասներկու, տասներեք և այլն այնպէս են կազմուած, որ շատ հեշտ են թուերի գումարման համար: Գերմաներէնը, որ նոյնպէս ճկուն լեզու է, թուականների անունները կազմում է այլ կարգով, քսանից յետոյ արդէն ուրիշ է, իսկ հայերէնում ինչպէս տասնմէկ, տասներկու, տասներեքն է, այնպէս էլ շարունակուում է. քսանմէկ, քսաներկու, քսաներեք և



այլն: Ես իմ մասնագիտութիւնից ելնելով եմ հարցին մօտենում, մենք գործ ունենք ճշգրիտ սահմանուած գաղափարների հետ:

Ես ուզում եմ նորից վերադառնալ մեր լեզուի հարստութեանը վերաբերող հարցին: Ի դէպ, պէտք է ասել, որ մեր լեզուն այնքանով է հարուստ, որ հեշտութեամբ կարողանամ է զանազան գիտութիւնների բնագաւառների հասկացութիւնների համար գտնել համապատասխան ձեւեր, բառեր ու արտայայտութիւններ: Գիտական աշխատանքի ընթացքում համոզուել եմ, որ հայերէնը շատ աւելի հարուստ լեզու է, քան բազմաթիւ եւրոպական լեզուներ: Կարող եմ օրինակ բերել հենց աստղագիտութիւնից: Եւրոպական բոլոր լեզուները ասում են էկլիպտիկա, իսկ հայերը ունեն իրենց սեփական բառը՝ խաւարածիր, որը արտայայտիչ ու հասկանալի է, մատչելի, քան օտար բառը: Կամ մի ուրիշ օրինակ, կայ էկուատոր, յունարէն բառ է, որը տարածուած է բոլոր եւրոպական լեզուներում, իսկ մեր գիտական լեզուում ունենք հասարակած: Տեսնո՞ւմ էք, մենք ինչքան հարուստ ենք: Եթէ որեւէ նրբութիւն արտայայտելու համար անհրաժեշտ է մի ուրիշ բառ հնարել, մենք արդէն պատրաստ ենք: Լեզուի հարստութիւնը գիտութեան բնագաւառի, ինչպէս նաև այլ բնագաւառների համար շատ մեծ նշանակութիւն ունի, որովհետև այս բարեմասնութիւնը հնարաւորութիւն է տալիս մեզ արտայայտելու մտքի և զգացմունքի նրբութիւնները, միեւնոյն ժամանակ պահպանելով մեր լեզուին յատուկ ոգին:

— Մեզ հետաքրքրում է այսպիսի մի հարց. Դուք շատ էք եղել արտասահմանում, հանդիպումներ էք ունեցել սփիւռքի հայերի հետ: Որպէս հաղորդակցման միջոց ո՞ր լեզուն էք ընտրել:

— Այո, ես շատ եմ եղել սփիւռքահայութեան շրջանում, և բոլոր տեղերում էլ բնականաբար խօսել ենք հայերէնով: Ոչ միայն ես, այլև արտասահման գործուղուած աստղագետները, օրինակ, ընկեր Լիւտվիգ Միրզոյեանը, հանդիպումների ժամանակ, ժողովներում միշտ էլ Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի գիտական գործունէութեան, Բիւրականի աստղադիտարանի յաջողութիւնների մասին հանդէս ենք եկել միայն հայերէն լեզուով: Երբ գիտական հարցերը շարադրել ենք հայերէն լեզուով, մենք բնաւ որեւէ պակասութիւն չենք զգացել, խօսել վստահ, համարձակ, նոյնիսկ այդ հանգամանքը մեզ որոշ չափով ոգեւորել, ոյժ է տուել:

— Ընկեր Համբարձումեան, ասացէք խնդրեմ, ի՞նչ է պահանջուում լեզուի նկատմամբ հոգատար լինելու համար:

— Լեզուի նկատմամբ հոգատար լինելու, լեզուական ունակութիւններ ձեռք բերելու համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ մարդ կառարելագործի իր գիտելիքները: Դրա համար հարկաւոր է ոչ միայն խօսելու և գրելու ժամանակ լաւ ընտրութիւն կատարել, հոգատարութեամբ օգտագործել մայրենի լեզուն, այլև այդ լեզուով շատ կարդալ, կարդալ հայ գրականութիւն, ընտրել լաւ լեզուով գրուած գործեր և կարդալ լեզուական ճաշակը բարձրացնելու համար: Ուրեմն այսպէս, ես գտնում եմ, որ մեր կողմից գործածուող լեզուի կատարելագործման ամենակարեւոր պայմանը գեղարուեստական գրականութիւն կարդալն է:

Լեզուի նկատմամբ հոգատար լինելու կարեւոր պայմաններից մէկն էլ այն է, որ մարդիկ պէտք է իրար սովորեցնեն, օգնեն, զգուշացնեն, թէ ինչպէս պէտք է ճիշդ խօսել: Ես էլ խօսելիս թերութիւններ ունեմ, վրիպումներ եմ թոյլ տալիս իմ շարադրանքի մէջ, գուցէ և դուք էլ ունեք, բայց երբ ունենք շատ սխալներ և լեզուի համար վտանգաւոր սխալներ, ապա այդ դէպքում կարելի է և պէտք է միջամտել, ուղղել և վերացնել: Ես յիշում եմ, թէ ինչպէս էր հայրս միջամտում, կանխում լեզուական սխալները և դրանով լեզուի նկատմամբ հոգատար



լինելու լաւ օրինակ էր ցոյց տալիս: Նա միշտ, երբ լսում էր, որ մեզանից որեւէ մէկը լեզուական սխալ է անում, իսկոյն միջամտում էր, ուղղում, բացատրում և երբեմն էլ զայրանում էր: Ուղղելուց յետոյ նա ջանում էր համոզել փաստերով, ցոյց էր տալիս, որ իր ուղղումը նրա համար է, որ միտքը ճիշդ արտայայտուի և մայրենի լեզուն չաղաւաղուի: Ես այդ ժամանակ սովորեցի, թէ ինչպիսի ուժեղ և միեւնոյն ժամանակ նուրբ կապ կայ մտքի և նրա արտայայտութեան միջև: Երբ այս կամ այն բառը, արտայայտութիւնը ճիշդ, տեղին չի գործածուում, տուժում է և՛ լեզուն, և՛ միտքը: Ուրեմն լեզուի նկատմամբ հոգատար լինելու համար շատ կարեւոր է նաև մտքի և արտայայտութեան կապի ներդաշնակումը, պահպանումը:

— Մեզ յայտնի է, որ Դուք այս կամ այն առիթով կատարում էք լեզուական ուղղումներ, դիտողութիւններ էք անում ուրիշներին թոյլ տուած սխալների համար: Կարո՞ղ էք մի քանիսը յիշել և բացատրել Ձեր նկատառումները:

— Օրինակները շատ են, բայց ես կը ցանկանայի խօսել միայն մէկի մասին: Ասում են՝ գիտական քարտուղար և գիտնական քարտուղար: Ես միշտ դէմ եմ եղել երկրորդին: Շատ է տարածուած այս ձեւը: Այո, մենք լեզուական կոպիտ սխալ ենք թոյլ տալիս, երբ գիտական քարտուղարին ասում ենք գիտնական քարտուղար: Ինչո՞ւ ենք այդպէս ասում, որովհետև չենք թափանցում արտայայտութեան, դարձուածքի էութեան մէջ, բառացի թարգմանում ենք և չենք նայում ինդրի էութեանը: Գիտական քարտուղարը այն մարդն է, որը զբաղւում է հիմնարկի գիտական գործերով, գիտական հարցերի քարտուղարութեամբ: Ուրեմն նա գիտական քարտուղար է, իսկ թէ նա միաժամանակ պէտք է լինի գիտական աշխատող, դա արդէն ինքնըստինքեան հասկանալի է: Գիտական քարտուղարը տարբերւում է միւս քարտուղարներից նրանով, որ նա գիտական հարցերով է քարտուղար և ոչ թէ քարտուղար՝ գործուղումներ ստորագրելու կամ, ասենք, այցելուներ գրանցելու, պետին զեկուցելու համար: Պէտք է այստեղ նկատել նաև այն, որ հենց գիտնական բառն ենք յաճախ շոայլում, տեղին չենք գործածում, ես կ'ասեի նոյնիսկ սխալ ենք գործածում: «Մենք՝ գիտնականներս...», «գիտնականների ժողով», «երիտասարդ գիտնականները...» և այլն, այսպէս շոայլօրէն ենք գործածում այդ բառը, առանց խորանալու նրա բուն էութեան, իմաստի մէջ: Գիտնականների թիւը կարելի է մատնների վրայ հաշուել, մինչդեռ գիտութեան բնագաւառի ամէն մի աշխատող իրեն գիտնական է կարծում: Դիսերտացիան պաշտպանելուց անմիջապէս յետոյ երիտասարդն արդէն իրեն անուանում է գիտնական: Ես շատ եմ խօսել գիտնական բառի նման գործածութիւնների մասին և դիտողութիւն շատ եմ արել, սակայն արդիւնքը չեմ տեսնում:

— Ինչպիսի՞ լեզուական աղաւաղումներ են Ձեզ աւելի մտահոգում, գուցէ և զայրացնում: Ի՞նչ տպաւորութիւն են թողնում այն անձինք, որոնք լաւ չտիրապետելով մայրենի լեզուին և ոչ էլ այլ լեզուների, խօսում, գրում են խառնուրդով: Ինչպէ՞ս կարելի է պայքարել լեզուախառնուրդով խօսողների ու մտածողների լեզուամշակոյթը բարձրացնելու համար:

— Ինձ թւում է, որ բոլոր լեզուական աղաւաղումներն էլ պէտք է մեզ՝ բոլորիս, մտահոգեն: Այո, կարելի է նոյնիսկ զայրանալ: Լեզուական խառնուրդով խօսողները մեզ ոչ միայն զայրացնում, այլև ծիծաղեցնում են: Ես յաճախ եմ հանդիպել նման դէպքերի: Լեզուական այս տիպի աղաւաղումը ինձ այնքանով է մտահոգել, որ տեղն ու տեղը ուղղել եմ: Խօսակցութեան մէջ տարբեր լեզուների բառեր, արտայայտութիւններ գործածելը մայրենի լեզուին վնասում է: Բացի այդ, լեզուական խառնուրդը փաստօրէն զրկում է մեր խօսքը տրամաբանական յստակութիւնից: Հետեւաբար այն մարդը, որը խօսում է երկու լեզուները խառնելով, մտածում է ինչ-որ ձեւով ինֆորմացիա հաղորդելու մասին, իսկ թէ իր



հաղորդածն ինչ տրամաբանական ձեւ է ստանում, նրան չի հետաքրքրում: Ինձ համար սկզբունքային տարբերությունն չկայ բանաւոր խօսքի և գրաւորի միջև: Ես շատ եմ հանդիպել խառնուրդով խօսող և գրող մարդկանց, որոնք խախտում են երկու լեզուի ներքին տրամաբանությունը և երբեմն էլ այն աստիճանի են աղաւաղում, որ թուլացնում են այդ լեզուների կառուցուածքային դրուածքը, իրենց խօսքը գրկելով ամբողջականությունից ու ներքին ներդաշնակությունից:

— Մեզ հետաքրքրում է, թէ Դուք ի՞նչ նկատառումով էք ձեր թոռնիկի համար ընտրել Ուլունք անունը:

— Ուլունք անունը ես գտայ Խաչիկ Դաշտենցի «Խոդեդան» վեպում: Երբ կարդացի վեպը, գեղջկուհու այդ անունը ինձ դուր եկաւ: Ցանկութիւն առաջացաւ իմ մէջ ստուգել, թէ որտեղից է առնուած այդ անունը: Հանդիպեցի հեղինակի հետ: Հետաքրքրուեցի՝ ի՞նքն է հնարել Ուլունք անունը, թէ կեանքից է առնուած: Դաշտենցը բացատրեց, որ այդ անունն ամենեւին էլ հնարովի չէ, այլ շատ է տարածուած եղել Մշոյ դաշտում, զուտ հայկական է: Ես ուրախացայ, որ ճիշդ է եղել իմ զգացումը:

Յօդուածներ

«Անորոշ» Վերամուտներ

Հրայր Ճեպէճեան,

Նիկոսիա, Կիպրոս

Ապրիլ 1975-ին սկսած քաղաքացիական կռիւները յեղաշրջեցին եւ յեղափոխեցին լիբանանեան իրավիճակը, ներառեալ՝ լիբանանահայ գաղութը: Փոխուեցան՝ երկրին կարգավիճակը, արտաքին աշխարհին մէջ տեղ գտած անոր հմայքը, կենցաղը, ապրելակերպը, նաեւ՝ մարդուժը: Լիբանանահայ գաղութն ալ անցաւ (յետադարձ ակնարկով մը կարելի է տեսնել զայն) շատ երկար եւ նոր պատմութեան մը հոլովոյթի հանգրուան մը, որ հաւանաբար կը շարունակուի մինչեւ օրս:



Այդ տարիներուն Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանի 11-րդ դասարանի աշակերտ էի, եւ կը պատրաստուէինք ամավերջի հանդէսին՝ ստանալու համար մեր վկայականները: Ապրիլ 1975-էն ետք դպրոցական օրերը եւ դասապահերը մէկիկ-մէկիկ սկսան ընդհատուիլ եւ անցան անցումային եւ հանգրուանային շրջաններէ՝ քիչ մը դաս, քիչ մը պարտադիր արձակուրդ-ընդմիջում մթնոլորտով: Ամավերջի հանդէսը դարձաւ անորոշ հորիզոնին վրայ երեւոյղ-չերեւոյղ (ան)հասանելի իրականութիւն:

Բայց երեւաց եւ հասաւ: Թէեւ դպրոցի շրջափակին մէջ շքեղ հանդիսութիւն տեղի չունեցաւ, ինչպէս աւանդութիւն էր կատարել իւրաքանչիւր կրթական տարեշրջանի աւարտին, բայց եւ այնպէս դպրոցի սրահին մէջ, աւելի սեղմ ու ապահով մթնոլորտի եւ պայմաններու մէջ կայացաւ ամավերջի հանդէսը:



Այսպիսով, Լիբանանն ու լիբանանահայ գաղութը դրուեցան նոր իրականութիւններու դէմ յանդիման, ուր գլխաւոր յատկանիշներէն մէկը անորոշութիւնն էր: Մեր անհատական, ընտանեկան եւ հաւաքական ու գաղութային կեանքերը կը կազմակերպուէին, կամ, աւելի ճիշդ, կը փորձուէր զանոնք կազմակերպել թէականութեան եւ անորոշութեան հովանիին տակ:

1975-76 տարեշրջանը սկսաւ քիչ մը ուշ՝ նկատի ունենալով երկրի քաղաքական անորոշ ու աննպաստ պայմանները: Երկրորդ պաշալտրեայի աշակերտներ էինք, տարեշրջանը սկսանք Յունուար 1976-ին, իսկ կրթական տարին տեւեց միայն մէկ ամիս, սակայն այս անգամ առկախումը բաւական երկարեցաւ: Իւրաքանչիւր ընտանիք եւ երիտասարդ պիտի որոշէր եւ ընտրէր յարմար ու լաւագոյն միջոցը՝ դուրս գալու համար լիբանանեան պատերազմի արհաւիրքէն: Մենք ընտանեօք որոշեցինք երթալ Հալէպ, որ եղաւ մեր նոր կայքը:

Հալէպի մէջ վերսկսաւ իմ դպրոցական կեանքս, թէեւ ժամանակաւորապէս, բայց՝ ամբողջովին նոր տարբերակով: Յարմար նկատուեցաւ զիս արձանագրել Լեւոն Նազարեան-Գալուստ Կիւլպէնկեան հայկական վարժարանի պաշալտրեայի դասարանը՝ փորձելով բան մը «կորզել» կորսուած ժամանակներուն փոխարէն: Մեծ տարբերութիւններ կային հոն՝ լիբանանեան մեր դպրոցական կեանքին հետ բաղդատելով: Նոր դպրոց, նոր դասընկերներ, թէեւ նոյնանման դասանիւթեր, սակայն՝ ամբողջովին արաբերէն լեզուով: Տակաւին կային նոր մթնոլորտն ու կենցաղը, հակառակ անոր որ շուրջս բոլորը հայեր էին ու ամէն ինչ հայկական էր: Ուսողութեան եւ գիտութեան դասապահերուն ուսուցիչներու բացատրութիւններուն կը հետեւէի՝ փորձելով, գէթ համեմատելով իմ գիտցած անգլերէն եզրերուս հետ, հասկնալ մատուցուածը:

Պէրյութի մէջ 10-րդ եւ 11-րդ դասարաններու աշակերտները շաբաթը անգամ մը կը կատարէին զինուորական վարժութիւն՝ հսկողութեամբ լիբանանեան բանակին կողմէ նշանակուած հայ զինուորական Ստեփան Օգնայեանի: Սուրիական քաղաքացիութիւն ունեցող հայերը զերծ կը մնային այս վարժութիւններէն: Հալէպի մէջ ալ, շատ աւելի շեշտուած կերպով, կային զինուորական վարժութիւններու դասապահեր: Իրականութեան մէջ դպրոցի ամբողջ առօրեան կլանուած էր նաեւ այդ մթնոլորտով: Լիբանանի մէջ որդեգրուած քաղաքականութեան հետեւելով, երբ բանակի դասատուէն խնդրեցի, որ զիս զերծ կացուցէ այս դասապահէն, նկատի ունենալով, որ լիբանանեան քաղաքացիութիւն ունէի, ան կտրուկ կերպով «ո՛չ» պատասխանեց: Աւելի՛ն. բացատրեց, որ Սուրիոյ պետականութեան կարգախօսն է՝ «Մէկ արաբական հայրենիք», որ կրնայ ընդգրկել բոլոր արաբ քաղաքացիները:

Այս տարիներուն երիտասարդական նորաձեւութիւն էր նաեւ տղոց երկար մազերը ներառեալ՝ իմ մազերս: Զինուորական դասատուն ըսաւ, որ պէտք է երթամ սափրիչին եւ ըսեմ, թէ մազերս պէտք է կտրուին զինուորական դասապահերու պատշաճ ոճով: Չկրցայ հասկնալ, թէ այդ ի՞նչ կը նշանակէր. սակայն ամէն ինչ յստակ դարձաւ, երբ գլուխս դրի սափրիչին տրամադրութեան տակ, եւ շատ կարճ ժամանակամիջոցի ընթացքին մազերս ամբողջովին անհետացան: Երիտասարդական զգացումներս չուշացան, մէկ կողմէ նեղութիւն, բարկութիւն կը զգայի, բայց միւս կողմէ՝ նաեւ զսպուած արցունքներ կային եւ մտորումներ՝ «Ես ո՛ր եմ»:

Բայց եւ այնպէս փորձեցի շարունակել այս «երթը»՝ քիչ մը հասկնալով, շատ նիւթեր չհասկնալով, համակերպելով եւ հանդուրժելով բոլոր նոր վիճակները, բայց նաեւ՝ վայելելով

Հալէպն ու հալէպահայութիւնը, ապրելով դասընկերներու ջերմութիւնը, ինծի նկատմամբ ունեցած իրենց հասկացողութեամբ լեցուն վերաբերումը: Տեսայ «սրտեր», որոնք պատրաստ էին ընդգրկելու ծանօթ-անծանօթ բարեկամութիւններ եւ տեղ տալու անոնց՝



որպէս հարագատի: Հալէպի մէջ ապրած այդ քանի մը ամիսները լաւ հիմնաքարը եղան շարունակելու եւ հասկնալու բարեկամութեան եւ հաղորդակցութեան արժէքներն ու հասկացողութիւնը:

Լիբանան վերադարձիս, թէեւ շարունակուեցաւ կրթական եւ ընդհանրական մեր կեանքը, բայց իրաքանչիւր տարուան հետ կար

նաեւ անորոշութիւնը՝ պիտի կարենա՞նք արդեօք սկսիլ ու բարուք աւարտին հասցնել տարեշրջանը: Իւրաքանչիւր տարեշրջանի սկիզբը կարծէք «մութ փապուղի»-ի մը մէջէն ճամբորդելու փորձ կ'ընէին, թէեւ անյստակ, բայց՝ վճռական, որովհետեւ կար հայեցի դաստիարակութիւն եւ ուսում ստանալու հասկացողութիւնն ու անհրաժեշտութիւնը, որոնք վեր էին ապահովական ամէն տեսակ պայմաններէ:

Այսօր յետադարձ ակնարկով կը դիտեմ այն երկար ճամբան, ուրկէ անցան Լիբանանն ու լիբանանահայութիւնը, կը նայիմ անձկութեամբ, նաեւ՝ գոհունակութեամբ: Անորոշութիւններով լեցուն այդ բոլոր հանգրուաններուն մէջէն փորձեցինք հաւաքաբար մեր երթը շարունակել, թէկուզ՝ մինչեւ օրս շատ դժուարութեամբ, բայց՝ մեր կեանքերուն հիմք ունենալով հայեցի դաստիարակութիւնը: Մեր իւրաքանչիւր վարժարանը իր իւրաքանչիւր կրթական տարեշրջանին իր անորոշ վերամուտով կրցաւ ամբողջացնել տարին՝ «քար» մը եւս ամրացնելով հայեցի դաստիարակութեան հայկական հիմքին:

Եթէ այսօր լիբանանեան քաղաքական բեմը տակաւին ունի շատ մը անորոշութիւններ, ասոր վրայ պիտի գան աւելնալու շրջանային իրադարձութիւնները, յատկապէս՝ սուրիական իրավիճակը, որուն իբրեւ հետեւանք՝ սուրիահայ մեր ընտանիքները կ'անցնին դժուար պայմաններէ: Պատմութիւնը դարձեալ ինքզինք կը կրկնէ՝ այս անգամ երկիրներու շրջուած կարգավիճակով:

Թէեւ «անորոշ» վերամուտները պիտի շարունակուին, բայց կայ լիբանանահայութեան փորձառութիւնը: Մութ փապուղիէն լոյսը գտնելու եւ անոր հասնելու ձգտումն ու յաջողութիւնը՝ երկար տարիներու վրայ: Այս պիտի նշանակէ, թէ «անորոշ» վերամուտին ստեն իսկ պարտինք շարունակել հաւատալ մեր վարժարաններուն հայեցի եւ գիտական դաստիարակութեան: Հաւատալ, որ մեր հայկական վարժարաններուն տուած դաստիարակութիւնը նոյնքան ուժեղ հիմնաքար է մեր զաւակներուն կեանքերուն համար եւ անոնց ասպարեգային բնագաւառներուն մէջ «տեղ մը հասնելու» մարմաջին երաշխիքը: Պէտք է շարունակենք գիտակցիլ, որ ազգային ինքնութիւնը եւ մեր մշակութային ժառանգութիւնները պահպանելը ապրուած եւ ապրուելիք կեանքերուն համար արժէք եւ հարստութիւն է, հայը պէտք է պահէ այդ արժէքն ու հարստութիւնը:

Ու տակաւին, եթէ հալէպահայ եւ սուրիահայ ընտանիքներու զաւակները պիտի համախմբուին մեր վարժարաններուն երդիքներուն տակ, այս պիտի նշանակէ, թէ պատրաստ պէտք է ըլլանք ոչ միայն հիւրընկալելու բոլորը, այլ նաեւ մեր բարեկամութիւնը,



հաղորդակցութիւնը եւ հասկացողութիւնը կիսել իրենց հետ՝ փորձելով կամրջել կրթական, ընկերային եւ կենցաղային բոլոր տարբերութիւնները:

«Անորոշ» վերամուտներ... բայց՝ անպայման հայ արժէքը պահպանելու մեր առաքելութիւններու առաջնահերթութեամբ ու առաջադրանքով:

Գրական-Մշակութային

Ջուրը՝ հոգուս մէջ

Միրում եմ նստել գետի ափին ծուլօրէն ընկած ողորկ քարերին ու նայել նրա մեղմ հոսանքին: Նայում եմ ու զմայլում ջրի կապտականաչաւուն երանգներով, խաղաղ, անդորր ընթացքով: Շատ եմ ուզում գրկել ալիքները... ու փարում եմ: Ջրի հետ մարմնիս շփումից հոգիս մի պահ սարսռում է. դա մեր մտերմութեան սկիզբն է: Յետոյ կարծես վերանում եմ այս աշխարհից ու ընկնում երանութեան գիրկը:



Ուզում եմ վայելել ջրի ջինջ կապոյտ ադամանդափայլ ցուլանքը, զգալ նրա ջերմ հպումը... լսել նրա մեղեդին թովիչ... Ուրիշ ոչինչ չեմ մտաբերում, անջատում եմ, ինչպէս մատի թեթեւակի հպումով կարելի է անջատել էլեկտրական որեւէ սարք:

Ու սկսում է իմ տարրալուծումը ջրի ցուլանքներին՝ հոգիս, սիրտս, յոյզերս, փոթորիկներս, ապրումներս... յետոյ ամէն ինչ լռում է. աշխարհն էլ է լռում: Ջուրն ամէն ինչ կլանում է իր մէջ ու սուզում խորքերն անյատակ: Միայն ուզում եմ իմ սերը թողնել այդ հմայիչ ջրերի մէջ, լսու՞մ ես՝ իմ մեծ ՍԷՐԸ:: Թող յորձանք տայ ջուրը ու տանի այն հեռու-հեռուններ, բաժանի կարօտ մարդկանց ու դաշտերին պապակ: Գուցէ մի սքանչելի դաշտում այդ սիրուց մի հրաշք ծաղիկ կը բուսնի՝ ՄԻՐՈՅ ԾԱՂԻԿԸ:

Խաղաղ են երկինքը, ջուրը, խաղաղ է այդ պահին աշխարհը, ու այդ աշխարհի մէջ՝ ես և դու, իմ հեռաւոր ընկեր: Ամենուրեք միայն ջրի մոզական ու վարակիչ հզօր ոյժն է, որ փոխանցում է մեզ: Անէութեան հրաշալի պահեր, անսահման թեթեւութիւն, տիեզերքի խորհրդաւոր ձայներ, մարմնի խաղաղ վիճակ, անկրկնելի ներդաշնակութիւն, ցնորք, մտապատկեր և անուրջներ, անուրջներ.....

Լապտերիկի ներքոյ

Գիշեր է, մութ է, խորհրդաւոր է..... Չարմանալի է, բայց մեծ քաղաքի փողոցներն ամայի են, տների լոյսերը վաղուց հանգել են: Հեռում միայն մի հեքիաթային լոյս է առկայծում... լապտերիկն է... փոքրիկ է այն, լոյսը՝ աննշան, բայց իմ հոգու լոյսն է, քո հոգու լոյսն էլ է..... Կարծես ամբողջ աշխարհն է լուսաւորում իմ՝ մի ափի չափ լապտերիկը... մեր լապտերիկը՝ սեւ և սպիտակ ստուերների միակ լոյսը: Աշխարհը գոյների զարմանահրաշ



Խաղ է..., բայց այդ պահին չկան այդ գոյները, մարել են, ցնդել են, վերացել, չբացել են անսպասելի, մնացել են սեւն ու սպիտակը, քանզի գիշեր է, մութ է անաղմուկ...

Լռել են բոլոր շուկները, բոլոր հնչիւնները. միայն մի շարժում կայ՝ նման մեր կեանքին...միայն մի լոյս՝ չքնադ, պայծառ ու խելագար, որ իր ցոլքերով վերստին ստիպում է զգալ կեանքի տաք շունչը և մեր եթերային ներկայութիւնը:

Հիասքանչ քաղաքի փողոցում մենք ենք միայն... ազահաբար կլանում ենք տիեզերքի բոլոր ձայները, բոլոր շունչները: Գիշերուայ մութը փաթաթուել է մեզ ու չի ուզում պոկուել մեզնից... Մենք խենթացել ենք...սակայն լուռ ենք: Բառեր այս պահին պետք չեն, դրանք շատ են ասուել: Լռութեան մէջ աւելի շատ բառ կայ՝ սեւ և սպիտակ փսփսուքներ: Անծայր է քաղաքը, անսովոր է, անծանօթ է ինձ, բայց ես չեմ վախենում մոլորուելուց...Կաք դուք. դու՝ իմ կողքին. լապտերիկը՝ մեր գլխավերեւում: Ու ես ապահով եմ, երբեք ոչ մի օր այդքան հանգիստ ու անվրդով չեմ եղել:

Ու աստիճանաբար պատռում է թանձր վարագոյրը, սկսում եմ շատ մօտիկից նայել աչքերիդ մէջ, ովկիանոսի նման կապոյտ ու ջինջ աչքերիդ մէջ...Ու աչքերիդ միջով աննկատ թափանցում եմ բազմաձայն հոգուդ բարդ ներաշխարհը:Նայում եմ երկնի պէս պարզ աչքերիդ մէջ ու անվերջ փնտռում եմ ու...ի վեջոյ գտնում եմ իմ աշխարհը...Քո աչքերի կրակների մէջ եմ գտնում ինձ: Ես անվարան պարզում եմ ձեռքերս, որ բռնեմ ինձ մեկնած քո փաղաքուշ ձեռքերը, որ գրկեմ քեզ ամուր-ամուր:....

Ու այս աշխարհից գողանում ենք մենք իրար, սուզում խենթացող զգուանքների, անանուն կարօտների ու խորը ներշնչանքների գիրկը: Մենք լապտերիկի ներքոյ ենք ու չենք զգում, որ արդէն կէսգիշերն անց է, մութ է անսահման ու խաւար է խիտ, հոգեվարք ապրող խաւար:

Ու պինդ գրկում ենք մենք գիշերը ու քնքնջօրէն փարում լռութեանը, սեւ և սպիտակ լռութեանը.....

Կարինէ Մովսիսեան

Հայաստան